

թեամբ ինչ եւ ճարտարութեամբ յանձանձեցին զտէրութիւն իւրեանց, ճարտարագոյն եւ արիագոյն եւս գտաւ սա՝ 'ի կայկայել եւ յընդարձակել զերկրայ եւ զդէղեւեալ պետութիւն հարց իւրոց եւ զազգ, մանաւանդ թէ զփոքր մի մասն ազգի. եւ զազգապետն՝ *լեռնական* ոմն ծանուցեալ, այնքան պատկառելի եւ վեհաշուք յարդարեաց, մինչեւ շարժել մեծագոյն աշխարհատեարց ժամանակին, ելեւելս իմն զմիմեամբք առնելով, 'ի թագընծայութիւն նմին, դաշամբք եւ դրօշուք, կրօնիւք եւ խնամութեամբք՝ կապիլ ընդ նմա եւ ընդ ժողովրդեան նորուն: Միանգամայն ասացից, եզակի սա 'ի մերայոցս ճանաչի յաչս օտարաց եւ զիտնոց քննչաց՝ այր մեծ եւ գերահանճար, յամենեցուն զովեալ, ամենեցուն զարմանալի. որում՝ ոչ եթէ չածէ ինչ ստուերածս փոքրկութիւն տարածութեան երկրին իշխեցելոյ, այլ եւ մեծագոյն յայնմ փոքրկութեան երեւի՝ քան մեծամեծքն այն ժամու ազգաց եւ աշխարհաց վարիչք. այն զի ինքնին ոչ սակաւ անդրավարեաց զսահմանս հայրենի ժառանգութեանն, մինչեւ, ըստ գրելոյ եւրոպացոյ ուրումն՝ յապարանս նորին հիւրամեծարելոյ, ընդ վեշտասան աւուրց գնացս ճանապարհի ձգէր երկայնութիւն երկրի նորա, եւ ըստ մերայոյ ուրումն գրողի՝ ընդ ամսօրեայ ճանապարհ տարածանէր ահ նորուն. իսկ համբաւ՝ բացագնաց եւս անդրաքայլեալ՝ նախանձելի առնէր գնա եւ հեռաւորաց ազգայնոց, յօժարաբար անուանելով գնա իբր հասարակաց Հայոց թագաւոր. որպէս զի՝ դիպողագոյն արդեօք պատշաճիցի սմա ասացուած Խորենացոյ պատմաօր՝ որ զՏիգրանայ Ա, եթէ «Արանց կացեալ գլուխ եւ արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց, եւ զընդ լծով կացեալս՝ լծադիրս եւ հարկապահանջս բազմաց կացոյց». եւ զոր՝ ցայնժամ ընդ սսիական ազանց եւեթ թանձունց եւ խափարականաց՝ ստիպեալ էր ունել գործ, նրբագունիցն եւրոպէացոց կերպագրեալ հաւասարեաց՝ փոքր 'ի շատէ, 'ի ձեւս, 'ի հրահանգս, 'ի սովորոյթ եւ յօրէնս. փոխանակ բոնադատ արաբացոյն եւ նմանոյն՝ զփարելի բարբառ փռանկին եւ զընտելական լատինն ենոյծ 'ի դարպաս իւր եւ 'ի դիւանս. եւ փոխանակ գոռոզ պահանջանաց յունական եկեղեցոյ՝ յիրաւափառն հռովմեական պատուաստեաց զՀայաստանեայցս՝ լծակշիռ հաւանութեամբ: Քան զշնորհեալն բազմաց՝ արութիւն քաջութեան, վեհագոյն ցուցաւ 'ի Լեւոն սակաւուցն պարգեւեալ հանճար՝ խորամուխ եւ երկայնամիտ, ամենայն աջողութեանց նորին պատճառ. ոչ պակաս 'ի զօրութենէ բազկին՝ զսրտին ունելով պնդութիւն. ոչ ընդհատ 'ի ճոխասէր բարուցն՝ եւ առատութիւն 'ի